# ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ

## ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ

## ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ (COVID-19). ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ

**Մնացեք ձեր նստավայրում կամ բնակարանում.** մի՛ գնացեք աշխատավայր, դպրոց կամ հասարակական մարդաշատ վայրեր:

**Առանձնացեք տան անդամներից** ձեր բնակավայրում կամ բնակարանում:

**Մի՛ հյուրընկալեք** ձեր բնակավայրում կամ բնակարանում:

**Մի՛ օգտվեք համատեղ օգտագործման տարածքներից.** կամ՝ օգտագործումից առաջ եւ հետո համապատասխան նյութերով մաքրեք դրանք:

**Սննդամթերքը, դեղորայքը եւ այլ պարագաներ պետք է** մատակարարվեն հեռակա կարգով՝ ոչ առձեռն:

**Խուսափեք ընտանի կենդանիների հետ շփումից.** անխուսափելիության դեպքում ձեռքերը լվացեք շփումից առաջ եւ հետո:

## ԱՐԳԵԼԱԿԵՔ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Հազի եւ փռշտալու ժամանակ բերանն ու քիթը **ծածկեք** միանգամյա անձեռոցիկով:

Անձեռոցիկն օգտագործելուց անմիջապես հետո այն **նետեք փակ աղբարկղ:**

Ձեռքերը **լվացեք** օճառով եւ ջրով:

Օգտագործեք **ձեզ համար առանձնացված կենցաղային իրերը**. սրբիչ, սպիտակեղեն, ատամի խոզանակ, բաժակ եւ ափսե:

Շփման ընթացքում **օգտագործեք դիմակ:**

### ՁԵՌՔԵՐԸ ԼՎԱՑԵՔ ՕՃԱՌՈՎ ԵՎ ՋՐՈՎ

Կերակուր պատրաստելուց առաջ եւ հետո:

Զուգարանից օգտվելուց անմիջապես հետո:

## ՀՈԳԱՑԵՔ ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### ԻՆՔՆԱԶԳԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Փորձեք կարգավորել ինքնազգացողությունը:

Ընդունեք այնպիսի քանակությամբ հեղուկ, քանի դեռ չեք սկսել պարբերաբար միզել:

### ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ

Բարեկամների եւ ընտանիքի հետ հաղորդակցվեք հեռախոսով կամ առցանց:

Տնային պայմաններում, փորձեք ապահովել ֆիզիկական ակտիվությունը:

**ՎԱՐԱԿԻՉ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ (ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱԶ, ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹՅՈՒՆ) ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 112**

საქართველოს ოკუპირებული ტერიტორიებიდან დევნილთა, შრომის, ჯანმრთელობისა და სოციალური დაცვის სამინისტრო

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք StopCoV.ge; moh.gov.ge; ncdc.ge; www.facebook.com/ncdcgeorgia
Կամ Զանգահարեք թեժ գիծ 116 001; 15 05

დაავადებათა კონტროლისა და საზოგადოებრივი ჯანმრთელობის ეროვნული ცენტრი
GEORGIAN NATIONAL CENTER FOR DISEASE CONTROL AND PUBLIC HEALTH

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է

# ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ՝ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ




*Ինչպես արդեն հաղորդել ենք, կորոնավիրուսի տարածման կանխիչ միջոցառումների շրջանակներում, Վրաստանի կառավարության որոշմամբ, հանրակրթական դպրոցներում, բուհերում, մանկապարտեզներում մարտի 1-ից ապրիլի 1-ը դադարեցվել են ուսումնական գործընթացները:*

Չնայած, գրեթե մեկամսյա ընդմիջման, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության որոշմամբ, 2019-2020 ուստարին կավարտվի հունիսի 15-ին: Ինչպես հայտարարեց փոխնախարար Էկատերինե Դղեբուաձեն, նախարարի հրամանով ուսումնական գործընթացի սահմանված ժամանակաշրջանը ուժի մեջ է:

- Եթե դպրոցը որոշի, որ իր աշակերտները պետք է ծրագիրն անցնեն լիարժեք կերպով, իհարկե, ընտրությունն ազատ է,- հայտարարել է Էկատերինե Դղեբուաձեն՝ հավելելով, որ ապրիլի 1-ից հետո դպրոցներում բաց թողնված դասերը տարբեր ձեւերով կլրացվեն, նախարարությունը ինքը կմշակի մեթոդը եւ ծրագիրը, իսկ թե ինչ ձեւով կիրականացվի բաց թողնված դասերի լրացումը՝ դպրոցները կորոշեն ինքնուրույն:

Ըստ նախարարության, դպրոցները կարող են դասերը լրացնել՝ օգտագործելով շաբաթ եւ կիրակի օրերը, կարող են հիմնական դասերից հետո՝ սահմանել լրացուցիչ դասեր, ինչպես նաեւ հնարավոր է դասերի ընթացքում որոշ թեմաների միավորում:

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի գլխավորությամբ ստեղծված միջգերատեսչական խորհրդի, ինչպես նաեւ Վրաստանի առողջապահության նախարարության հանձնարարականով, նոր «Կովիդ 19» վարակի կանխարգելման նպատակով, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, կրթական հաստատությունների համար, մշակել է հանձնարարականներ:

Հիմք ընդունելով հանձնարարականները՝ դպրոցները նորացված կրթական գործընթացը պետք է պլանավորեն այնպես, որ ազգային ուսումնական ծրագրի նպատակներն ամբողջությամբ կատարվեն: Արձակուրդի ընթացքում աշակերտներին կրթական-ճանաչողական ռեսուրսներ տրամադրելու նպատակով, հանրակրթական ուսումնական հաստատություններին առաջարկվում է օգտագործել հեռավար հաղորդակցում, որը հասանելի է դպրոցականների հնարավորության շրջանակներում:

«Կարեւոր է, որ հանձնարարականներին համապատասխան, յուրաքանչյուր դպրոց, ուսուցիչ/դասղեկ հաշվի առնեն աշակերտների անհատական վիճակը, թվային սարքերի եւ համացանցի հասանելիությունը: Միաժամանակ, յուրաքանչյուր ուսուցիչ, պետք է աշակերտի համար ընտրի արտադասարանական ընթերցանության նյութեր կամ աշակերտը պետք է օգտվի դպրոցական գրադարանից: Գրադարանի նյութերը դպրոցի տնօրինության կողմից աշակերտին պետք է տրամադրվեն ծնողի համաձայնությամբ: Այս նպատակների իրագործման համար, խորհուրդ է տրվում ուսուցիչներին, նյութերը համապատասխանեցնել առարկայական ուղղությամբ: Օրինակ՝ կարդալ գրականություն, ճանաչողական ակտիվություններ, հետազոտական ծրագրեր, առցանց հարթակներ/թվային նյութեր (առկայության դեպքում), թեմատիկ առաջադրանքներ եւ այլն:

Անհրաժեշտ է ստեղծել կապի ցանցեր դասղեկների, առանձին ուսուցիչների եւ բաժնի վարիչների միջեւ: Ուսուցիչներն աշակերտների հետ պետք է կազմեն հաղորդակցության տարբեր ձեւեր: Այս գործընթացում հնարավոր է օգտագործել Microsoft Office 365-ի արտադրանքը, որը հասանելի է հանրակրթական դպրոցների բոլոր ներկայացուցիչներին: Այդ նպատակով, դպրոցի ներկայացուցիչը պետք է մուտք գործի https://email.mes.gov.ge/ կայք-էջ եւ ծանոթանա հրահանգներին: Ծնողներին համապատասխան հանձնարարականներ փոխանցելու նպատակով, կօգտագործվեն բոլոր հնարավոր հաղորդակցական ձեւերը, օրինակ. սոցիալական ցանցը, տեսազանգը, հեռախոսային հաղորդակցությունը, էլփոստ եւ այլն: Հարկ է նշել, որ զուգահեռ թարմացվելու է անվճար ռեսուրսների ցանկը, կրթական el.ge կայքում»,- ասված է հաղորդագրության մեջ:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

*Վրաստանի Երկրորդ ալիքը կվերափոխվի կրթական հարթակի: Այս նորույթը նախատեսում է կրթության նախարարության եւ Վրաստանի Առաջին ալիքի համատեղ՝ «հեռուստադպրոց» նախագիծը: Այսօր կայացել է նախագծի հերթական աշխատանքային հանդիպումը, որին ներկա էր Վրաստանի կրթության նախարար Միխեիլ Չխենկելին:*



Նոր նախագծի համար կօգտագործվեն նաեւ Վրաստանի Առաջին ալիքի տարբեր մամլոհարթակները՝ 1tv.ge կայք-էջը, youtube եւ ֆեյսբուքյան էջերը: Մշակվում է ուսումնական համընդհանուր ցանկը (դասերի աղյուսակը), որը կիրապարակվի առաջիկա օրերին:

Ազգային ուսումնական ծրագրով նախատեսված հեռուստադասընթացները անց են կացնելու փորձառու ուսուցիչները: Օգտագործվելու են նաեւ առաջատար ընկերությունների ուսումնական ֆիլմերը:

Ծրագրի մեկնարկը կապված է կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի հետ, սակայն նրա կարեւորությունից ելնելով կշարունակվի նաեւ իրավիճակի հանդարտվելուց հետո:

Կրթության նախարար Միխեիլ Չխենկելու խոսքով, կրթական նախագծի շրջանակներում աշակերտները կունենան հետաքրքիր դասեր տեսնելու հնարավորություն:

- Մենք սկսում ենք չափազանց կարեւոր նախագիծ: Սա աստղադիտակի նախագիծ է, որտեղ յուրաքանչյուր ուսանող, անկախ ինտերնետ հասանելիությունից, հնարավորություն կունենա բոլոր առարկաներից սերտել շատ հետաքրքիր դասեր,- ասաց Վրաստանի կրթության նախարար Միխեիլ Չխենկելին:

Ըստ Վրաստանի Առաջին ալիքի գլխավոր տնօրեն Վասիլ Մաղլափերիձեի՝ նախագիծը կլինի երկարաժամկետ եւ նպատակ ունի Երկրորդ ալիքը վերածել կրթական ալիքի:

# ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՄԲՈՂՋ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՀԱՐՑԱԿԱՆԻ ՏԱԿ ԴՐՎԻ

***Ըստ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի կարծիքի՝ կորոնավիրուսի հետ կապված Վրաստանում ստեղծված իրավիճակը հնարավոր է խաթարի ուսումնական սովորական գործընթացը:***

- Ես կասկածում եմ, որ մինչեւ ապրիլի 26-ը մենք կկարողանանք լիովին վերսկսել դասապրոցեսը,- հայտարարել է Գիորգի Գախարիան: - Եթե մինչեւ ապրիլի 26-ը դպրոցներում ուսումնական գործընթացը չվերսկսվի, ապա ամբողջ ուսումնական տարին հարցականի տակ կդրվի: Կրթության նախարարությունն առաջիկա օրերին այս ուղղությամբ պետք է իր հատուկ ծրագիրը ներկայացնի: Քանի որ որոշ դպրոցներ գուցե պատրաստ են հեռավար ուսուցման, բայց իրավիճակը այլ է այն մարզերում, որտեղ շատ երեխաներ նույնիսկ համացանց չունեն:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՏԱԳԵՏ

# ԳՈՒՑԵ ԹԵ ՈՒՇԱՑԱԾ, ԲԱՅՑ ԱՐԴԵՆ՝ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՈՒ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑ



*Ինչպես խոստովանեց Լեւոն Պետրոսյանը մեր զրույցի ընթացքում, գեղանկարչությունն իր կյանք եկավ համեմատաբար ուշ՝ 20 տարեկանում, երբ նա վաղուց հրաժեշտ էր տվել Թբիլիսիի թիվ 72 դպրոցի դասասենյակներին, մանկական նախշանկարներով իր տետրերին, երբ արդեն մասնագիտորեն կողմնորոշվել, սովորում էր Վրաստանի տեխնիկական համալսարանի շինարարական ֆակուլտետում ու փայփայում էր շինարար մասնագետի մոտակա տեսլականը…*

Շրջադարձային այդ օրից ութ տարի է անցել, եւ հիմա նա այդ պահը հիշում է շնորհակալությամբ. «Մտքերով տարված, ինքս էլ չհասկացա, թե ինչպես հանկարծ ձեռքիս գրչով նկարեցի՝ իմ մեջ ասես անվերջ ապրող ու ինձ ոգեշնչող աղջկա ծանոթ դեմքը…»:

Հաջորդ նկարը՝ արդեն կտավի վրա, իր պապի՝ «Վրաստան» թերթի բազմավաստակ թարգմանիչ, լուսահոգի Մարտունի Խաչվանքյանի գեղանկարն էր: Ի դեպ, Մարտունի Խաչվանքյանը Երեւանի Հակոբ Պարոնյանի անվան պետական երաժշտական կոմեդիայի կինոյի եւ թատրոնի հռչակավոր դերասան, 20-րդ դարի երկրորդ կեսի հայ բեմի ամենաճանաչված կատակերգուներից մեկի՝ ՀԽՍՀ ժողովրդական դերասան Կարպ Խաչվանքյանի (1923-1998թթ.) հորեղբոր տղան է: Երկուսն էլ ծնվել եւ մեծացել են Ախալցիխեում: Կյանքի թելադրանքով Մարտունին մնաց Թբիլիսիում, իսկ Կարպը տեղափոխվեց Երեւան, ընդունվեց Թատերական ինստիտուտ…

Եվ երեւի արվեստի հանդեպ գերդաստանի սերը շարունակվեց ու նպատակ դարձավ Լեւոն Պետրոսյանի համար: Իսկ քանի որ, հայտնի օրինաչափությամբ, նպատակը դեպի իրեն է ձգում կյանքի ցանկալի հանգամանքները, դրանք չշրջանցեցին նաեւ՝ կերպարվեստում իր հոգու սնունդը փնտրող երիտասարդին: Այդ մասին նրա պատկերացումը ավելի քան հստակ է. «Նկարելն ինձ օգնում է ավելի լավ ճանաչել ինքս ինձ ու՝ ազատվել նրանից, ինչը խանգարում է շրջապատում լավն ու ազնիվը տեսնելուն…»:

…Իսկ նկարում է գլխավորապես դիմանկարներ, եւ այդ դեմքը պիտի լինի տպավորիչ, եթե կարելի է այդպես ասել, բովանդակալից:

Արվեստի ընդգրկուն, ուսանելի աշխարհում, Լեւոնի ուսուցիչը, ոգեշնչման աղբյուրը գեղանկարչության անգերազանցելի վարպետ Ռեմբրանդտն է (1606-1669թթ.). կերպարվեստի այդ խոշորագույն ներկայացուցիչը եղած նկարիչներից «ամենան» է, ումից նա փորձում է սովորել՝ մարդու անհատականությունը տեսնելու, մարդկային զգացմունքներն այդչափ ճիշտ ու այդչափ նրբորեն բացահայտելու գաղտնիքները:

Առաջին ցուցահանդեսը Լեւոնն ունեցավ 2019-ին, Շիդա Քարթլիի Կասպիի մունիցիպալիտետի Գարիղուլա գյուղի Art «Գարիղուլա» սրահում՝ «Եկել է նորարարության ժամանակը» խորագրով, ուր նրան հրավիրեց 60-ամյա գեղանկարիչ, իր լավ ընկեր ու բարեկամ, սրահի տնօրեն Կարաման Քութաթելաձեն: «Գարիղուլային» հաջորդեցին Լեւոնի մյուս անհատական ցուցահանդեսները Թբիլիսիում, ապա եւ՝ Հռոմում, Ամստերդամում, իսկ մեկ տարի առաջ՝ 2020-ի հունվարին, Նյու Յորքում, որի ցուցահանդես-վաճառքին, ի դեպ, վաճառվեցին նրա 3 կտավներն ու 15 փորագրանկարները:

Իր աշխատանքներում Լեւոնը մշտապես ձգտում է մի բանի, «որ դիմանկարը լինի կենդանի, մտովի զրուցի դիտողի հետ, ու դիտողը նկարից աչք չկտրի…»:

28 տարեկան Լեւոն Պետրոսյանն այսօր ունի գուցեեւ ստեղծագործական ոչ հարուստ կենսագրություն, սակայն նպատակասլաց գեղանկարչի իր ծրագրերն ու սպասումները: Մոտ առաջիկայի համար նախատեսել է «Զինված մայրեր խորագրով» ցուցահանդես՝ Վրաստանում, ապա՝ մեկ այլ ցուցահանդես «Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանում», ծրագրերի շարքում «Վրաստանն ու Հայաստանը գեղանկարիչների աչքերով» ֆիլմն է նաեւ: Ըստ ֆիլմի մտահղացման՝ աշխարհի հնագույն մշակույթի տեր այդ երկրները, ոչ ընդարձակ կինոժապավենում, կներկայացվեն այնպես, որպիսին դեռ ոչ մեկը չի տեսել նրանց…

Ի դեպ, Լեւոնն իրեն համարում է լավատես եւ ապրում է՝ «Վաղվա օրը այսօրվանից լավն է լինելու» անսասան համոզմունքով:

Իրականացում քո անձնական ու ստեղծագործական բոլոր նպատակներին, Լեւոն:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՏՈՒԺՅԱԼ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿՑՈՒՑԱԴՐՎԻ 150 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ



*Կորոնավիրուսի տարածման արդյունքում հնարավոր տնտեսական վնասների մասնակի փոխհատուցման նպատակով՝ Հայաստանի կառավարությունն առաջիկայում 150 մլրդ դրամի աջակցություն կցուցաբերի տնտեսությանը:*

Կառավարությունը կորոնավիրուսի արդյունքում բիզնեսին աջակցություն ցուցաբերելու 25-ական մլրդ դրամի փաթեթներ է պատրաստում սոցիալական աջակցության եւ բիզնեսին օժանդակելու համար: 80 մլրդ դրամի հիմնադրամ կձեւավորվի, որը միտված կլինի տնտեսության վերաձեւավորմանը եւ կարգաբերմանը հետճգնաժամային ժամանակների չափանիշներին համապատասխան: Այդ մասին կառավարության նիստում հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

- Մեր տնտեսությանը պետք է աջակցենք: Առաջիկայում կառավարությունն առնվազն 150 մլրդ դրամի աջակցություն կցուցաբերի տնտեսությանը: Մենք փաթեթ ենք պատրաստել, որը մի քանի օրվա մեջ գործնականում հնարավոր կլինի կիրառել: 25 մլրդ դրամ կհատկացնենք այն ընկերություններին, որոնք կվերցնեն վարկ հայաստանյան բանկերից՝ դրամային արտահայտությամբ, իրենց աշխատակիցների աշխատավարձերը վճարելու եւ այլ հարցերի համար: Կառավարությունն այդ վարկի 50 տոկոսը կհամաֆինանսավորի 0 տոկոսով, իսկ բանկի հատվածի տոկոսը կսուբսիդավորի,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետի խոսքով, կառավարությունը լուրջ խնդիր է դրել աջակցություն ցույց տալ նաեւ գյուղատնտեսությանը, ոլորտի վարկերը կսուբսիդավորվեն, մինչեւ դառնա 0 տոկոս:

Փաշինյանը հավելեց, որ 30 մլրդ դրամի փաթեթ են պատրաստել սոցիալական հրատապ աջակցության համար, իսկ 80 մլրդ դրամի փաթեթ՝ այն կազմակերպությունների համար, որոնք կզբաղվեն Հայաստանը նոր աշխարհին պատրաստելով:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՓՈԽՎԵԼՈՒ Է»



*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հավանական է համարում, որ կան բազմաթիվ մարդիկ, որոնք այս ընթացքում վարակվել են կորոնավիրուսով, բուժվել, սակայն չեն իմացել այդ մասին: Նրա խոսքով, պետք է փոխել վերաբերմունքը կորոնավիրուսի հանդեպ:*

- Ես կարծում եմ, որ մենք պետք է փոխենք մեր վերաբերմունքը կորոնավիրուսի նկատմամբ, դրան վերաբերվենք, որպես մի հիվանդության, որը բավական վտանգավոր է տարիքով մարդկանց համար, ինչպես գրիպը: Մեր հիմնական խնդիրը պետք է լինի մեր սիրելի տարեց ծնողներին, տատիկներին ու պապիկներին ուշադիր լինելը,- նշեց վարչապետը:

Նիկոլ Փաշինյանը վստահեցրեց, որ կառավարությունը երկրում կորոնավիրուսի հետ կապված ողջ ինֆորմացիան օպերատիվ եւ թափանցիկ կերպով հրապարակում է, սակայն նա վստահ չէ, որ բոլոր երկրներն են հետեւում այդ կանոնին:

## ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

*Հայաստան վերադարձող Հայաստանի քաղաքացիներին առաջնային օժանդակություն կցուցաբերվի՝ հետագայում նրանց լիարժեք եւ կայուն վերաինտեգրումն ապահովելու համար:*

Կառավարությունն ընդունել է «Հայաստանի վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագիրը»:

Այն բաղկացած է 2 բաղադրիչից՝ տեղեկատվական աջակցության տրամադրում եւ գնահատված կարիքներին համապատասխան ուղղորդում: Այս բաղադրիչը վերաբերում է ինչպես կամավոր, այնպես էլ՝ հարկադիր վերադարձող Հայաստանի քաղաքացիներին, տեղեկացնում է Միգրացիոն ծառայությունը:

Երկրորդը կացարանով ապահովման բաղադրիչն է: Այն վերաբերում է միայն հարկադիր վերադարձած Հայաստանի քաղաքացիներին: Ժամանակավոր կացարանով ապահովումը նախատեսում է բնակարան վարձակալելու համար սուբսիդիայի տրամադրում՝ 6 ամիս տեւողությամբ, 60.000 դրամի չափով:

Ծրագրով սահմանվել են ժամանակային չափանիշներ՝ առնվազն 1 տարի արտերկրում բնակության տեւողությունը եւ վերադարձից հետո առավելագույնը 3 ամսվա ընթացքում ծրագրին դիմելու ժամանակահատվածը:

Ծրագրի հիմքում է անձանց խոցելիությունը, այլ ոչ թե նրանց միգրացիոն փորձառություն ունենալու հանգամանքը:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՍԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ ԵՆ

*Հայաստանի ողջ տարածքում 20 եւ ավելի անձանց մասնակցությամբ միջոցառումներն արգելվելու են: Այդ մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է Հայաստանի փոխվարչապետ, պարետ Տիգրան Ավինյանը:*

«Այս որոշման իմաստով հանրային միջոցառումներ են 20 եւ ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետեւյալ միջոցառումները՝ համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները եւ սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումները, ժամանցային միջոցառումները, տոնական եւ հիշատակի միջոցառումները, ներառյալ, ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), հոգեհանգստի եւ թաղման միջոցառումները:

Նշեմ, որ հոգեհանգստի եւ թաղման միջոցառումների դեպքում կփորձենք մասնակցության փոքր-ինչ ավելի լայն հնարավորություններ տալ՝ միաժամանակ հետեւելով, որպեսզի մարդկանց կուտակումներ արարողության ժամանակ չլինեն»,-գրել է Ավինյանը:

### ԲԱՑՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎ

***Հայաստանի ֆինանսների նախարարությունը տեղեկացնում է, որ մարտի 13-ին գանձապետարանում բացված «Ֆիզիկական անձանց եւ կազմակերպությունների նվիրաբերություններից պետությանը, կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման եւ հաղթահարման ապահովման համար ֆինանսական աջակցություն» 900005001947 հաշվին մարտի 20-ի դրությամբ փոխանցվել է 321 մլն 167 հազ. 610.6 դրամ, ընդհանուր առմամբ, կատարվել է 1355 վճարում:***

### ՀԱՆՐԱՔՎԵԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ Է

***Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայտարարությամբ՝ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման եւ անցկացման նպատակով իրականացվող բոլոր աշխատանքները դադարեցվում են գործընթացի բոլոր մասնակիցների կողմից:***

***Հիշեցնենք, որ Հայաստանում Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն նախատեսված էր ապրիլի 5-ին, սակայն կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով Հայաստանի կառավարությունը մարտի 16-ից ապրիլի 14-ը երկրում արտակարգ դրություն է հայտարարել:***

***Հայաստանի վարչապետի հայտարարությամբ՝ Հանրաքվեն տեղի կունենա արտակարգ դրության ավարտից հետո ոչ շուտ, քան 50 եւ ոչ ուշ, քան 65 օր հետո: Հանրաքվեի գործընթացը կսկսվի այն կետից, որտեղ որ ավարտվել էր:***

### ՄԱՐՏԻ 18-ԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՂՈԹՔԻ ՕՐ ԷՐ

***Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից մարտի 18-ը հայտարարվեց Համազգային աղոթքի օր:***

***Համազգային աղոթքի օրը Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը իր խոսքում, մասնավորապես, նշեց.***

***- Ապաքինման, ինքնամեկուսացման ու առանձնացումի մեջ գտնվող սիրելի զավակներ Մեր, դուք միայնակ չեք:***

***Այս պահին համայն մեր ժողովուրդը՝ աշխարհական եւ եկեղեցական, երիտասարդ եւ տարեց, յուրաքանչյուր հավատացյալ անձ իր առանձնական աղոթքն է երկինք վերառաքում բոլոր հիվանդների շուտափույթ առողջության, մեկուսացվածների տոկունության ու արիության եւ Աստծո գթառատ հովանու ներքո մեր կյանքի պաշտպանության համար: Համազգային աղոթքի այս օրը տարակույս չունենք, որ ողորմած Տերը լսում է մեր ձայնը: Առանձնաբար այս պահին ամեն մեկն իր բնակության, իր ծառայության վայրում աղոթում է, եւ աղոթքի քաղցրահունչ ձայնն է, որ մեզ միավորում է որպես մեկ ազգ, որպես Աստծո ժողովուրդ:***

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ Է. Ի՞ՆՉ Է ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*Հայաստանի կառավարությունը ներկայացրել է արտակարգ դրության ընթացքում կանխարգելիչ միջոցառումների, սահմանով մուտքի եւ ելքի, տեղաշարժման սահմանափակումների եւ անհրաժեշտ այլ քայլերի մասին տեղեկություններ:*

Կառավարության պարզաբանումներով, Հայաստանի քաղաքացիները չեն կարող ցամաքային սահմանով լքել երկրի տարածքը. բացառություն կկազմեն բեռնափոխադրումներ իրականացնողները, օրինակ՝ վարորդները, Հայաստանի քաղաքացիները, նրանց ընտանիքի անդամները (եթե նույնիսկ Հայաստանի քաղաքացի չեն), Հայաստանում հաշվառված եւ բնակվող անձինք կարող են մուտք գործել երկրի տարածք: Այլ օտարերկրացիների մուտքը արգելվելու է, եթե, օրինակ, նրանք այնպիսի երկրների քաղաքացիներ են կամ վերջին 14 օրը գտնվել են այնպիսի երկրներում, որտեղ համաճարակաբանական լարված իրավիճակ է տիրում:

Արտակարգ դրությունը նախատեսում է նաեւ տեղաշարժման սահմանափակումներ, մասնավորապես, կգործի համայնքի տարածք մուտք գործելու եւ ելք կատարելու հատուկ ռեժիմ, որը կիսկեն ոստիկանությունը, առողջապահության նախարարության, արտակարգ իրավիճակների նախարարության, առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինների, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, մարզպետարանի եւ համայնքապետարանի ներկայացուցիչները:

Արտակարգ դրությունից ելնելով Հայաստանի ողջ տարածքում արգելվելու է հավաքների եւ գործադուլների անցկացումը: Բացի այդ, կարող են սահմանվել տարածքներ, որտեղ կարգելվեն այնպիսի հանրային միջոցառումներ, օրինակ՝ սպորտային, մշակութային, կրթական, ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման եւ այլն: Բոլոր պետական, համայնքային եւ ոչ պետական հանրակրթական (այդ թվում՝ մանկապարտեզները), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում կարգելվի ուսումնական գործընթացը: Այս արգելքը չի տարածվի հեռավար (օնլայն) ուսուցման վրա:

Արտակարգ դրության պայմաններում, եթե անձինք եւ զանգվածային լրատվության միջոցները համացանցում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում կամ այլ ձեւով ցանկանում են տեղեկատվական նյութ տեղադրել կորոնավիրուսի վարակման առկա եւ նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, մեկուսացվածների քանակի մասին, ապա պետք է օգտվեն բացառապես պաշտոնական տեղեկատվությունից:

Հայաստանի կառավարությունը հիշեցնում է, որ արտակարգ դրությամբ սահմանված սահմանափակումների չենթարկվելը հանգեցնում է վարչական պատասխանատվության:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՄԱՐՏ

*22.03.2020 Դատավորի կիրակի*



*28.03.2020 Սուրբ Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների ու Վիրապ մտնելու հիշատակության օր*

Հայ առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված երեք հիշատակության օրերից՝ տարվա մեջ առաջինն է եւ ըստ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցի՝ նշվում է Մեծ պահքի 6-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը: Տոնը կատարվում է՝ ի հիշատակություն Խոր Վիրապում Սբ. Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքների: Խոր Վիրապում կրած 13 տարիների չարչարանքներից հետո, Սբ. Գրիգոր Լուսավորչը դուրս գալով ստորգետնյա զնդանից, Քրիստոսի լույսն է տարածում հայոց աշխարհում, դառնալով պետականորեն ճանաչված Հայ եկեղեցու առաջին հովվապետը: Գրիգոր Լուսավորչի հիշատակը, իբրեւ համաքրիստոնեական սրբի, տոնում են նաեւ քրիստոնյա մյուս եկեղեցիները:

*29.03.2020 Գալստյան կիրակի*

## ՕԾՎԵՑԻՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Նոր կորոնավիրուսի տարածման դեմ իրականացվող միջոցառումներին ներգրավվեց նաեւ հոգեւորականությունը: Վրաց Ուղղափառ եկեղեցու պատրիարքության որոշմամբ, մարտի 17-ին վրաց հոգեւորականները Թբիլիսիի փողոցներում կազմակերպեցին շրջերթ, որի ընթացքում իրականացվեց օծման օրհնաբեր արարողություն:

Ինչպես նշեցին Պատրիարքարանում, այս նախաձեռնությունը բխում է երկրում ստեղծված իրավիճակի հանդեպ ընդհանուր պատասխանատվությունից եւ միտված է այս բարդ օրերին ամրացնել հոգեւորականների եւ հավատացյալների միջեւ կապը:



## ԶԳԱՑՎԵՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

## ՖՈՒՏԲՈԼԻ «ԵՎՐՈ-2020»-Ը ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է ՄԵԿ ՏԱՐՈՎ, ԻՍԿ ՏՈԿԻՈՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅԺՄ ՉԿԱ

Ֆուտբոլի Եվրոպայի 2020 թվականի առաջնությունը հետաձգվեց մեկ տարով:

Նման որոշում ընդունվեց ՈՒԵՖԱ-ի մասնակից անդամների տեսախորհրդաժողովի ժամանակ, որին մասնակցում էին ազգային ֆեդերացիաների ներկայացուցիչները:

Եվրոպայի առաջնությունը կանցկացվի 2021 թվականին՝ հունիսի 11-ից հուլիսի 11-ը:

Հիշեցնենք, որ Եվրոպայի առաջնության 60-ամյակի կապակցությամբ, մրցաշարը կանցկացվի 12 քաղաքներում՝ Լոնդոնում, Մյունխենում, Սանկտ Պետերբուրգում, Բաքվում, Հռոմում, Բուխարեստում, Դուբլինում, Կոպենհագենում, Բիլբաոյում, Գլազգոյում, Բուդապեշտում եւ Ամստերդամում:

Իսկ ինչ վերաբերում է ընթացիկ տարվա հուլիսի 24-ից մինչեւ օգոստոսի 9-ը ծրագրված Տոկիոյի ամառային 32-րդ օլիմպիական խաղերի անցկացմանը, ապա՝ մարտի 16-ին Միջազգային օլիմպիական կոմիտեն հայտարարեց, որ այս պահին մտադիր չէ հետաձգել կամ չեղարկել 2020 թվականի Օլիմպիական խաղերը:

«Սա աննախադեպ իրավիճակ է ողջ աշխարհի համար, եւ մենք մտածում ենք բոլորի մասին, ովքեր տուժել են այս ճգնաժամից: Մենք համերաշխ ենք ողջ աշխարհի հանդեպ եւ անում ենք հնարավորը վարակը կանգնեցնելու համար: Կորոնավիրուսը լուրջ ազդեցություն ունի Տոկիոյի օլիմպիական խաղերի նախապատրաստական աշխատանքների վրա: Իրավիճակը փոխվում է ամեն օր:




Մինչ խաղերի մեկնարկը մնացել է չորս ամիս եւ այս պահին անհրաժեշտ չէ ընդունել արմատական որոշումներ:

Միջազգային օլիմպիական կոմիտեն վստահ է, որ ամբողջ աշխարհում ընդունված միջոցները կօգնեն կանգնեցնել կորոնավիրուսը»,- ասվում է կոմիտեի հայտարարության մեջ:

INTERNATIONAL OLYMPIC COMMITTEE

Նշենք, որ մարտի 20-ին Տոկիոյի Օլիմպիական խաղերի կրակն արդեն հասցվել է Ճապոնիա:

Հատուկ օլիմպիական կրակի համար նախատեսված օդանավը վայրէջք է կատարել Տոհոկո մարզում, որը Ճապոնիայի հյուսիսային հատվածում է: Այն օդանավից վերցրել են օլիմպիական մեդալակիրներ ձյուդոիստ Տադահիրո Նոմուրան եւ ըմբիշ Յոսիդա Սաորին:

32-րդ ամառային Օլիմպիական խաղերը կհյուրընկալի Տոկիոն: Դրանք կմեկնարկեն հուլիսի 24-ին եւ կեզրափակվեն օգոստոսի 9-ին: Աշխարհի 206 երկրներից մոտ 11 հազար մարզիկներ կմրցեն 33 մարզաձեւերում:

## «ԵՎՐԱՏԵՍԻԼ-2020» ԵՐԳԻ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԵՂԱՐԿՎԵՑ

Եվրոպայի հեռարձակողների միությունը (EBU) պաշտոնապես հաստատել է, որ 2020 թվականի Եվրատեսիլ երգի մրցույթը կորոնավիրուսի պատճառով չի անցկացվի:

EUROVISION SONG CONTEST ROTTERDAM 2020

Եվրափառատոնը պետք է անցկացվեր Ռոտերդամում, մայիսի 12-ին, 14-ին եւ 16-ին: 2020 թվականին Վրաստանը Եվրատեսիլ երգի մրցույթում ներկայացնելու էր Թոռնիկե Ղիփիանին, իսկ Հայաստանը՝ Աթենա Մանուկյանը::

Դեռեւս հայտնի չէ, 2021 թվականին կանցկացվի, արդյոք, մրցույթը կրկին Ռոտերդամում:



Ախալքալաքիի մունիցիպալիտետի Մերենիա գյուղի հանրային դպրոցի մանկավարժները, աշակերտներն ու համագյուղացիները խոր վշտով հայտնում են դպրոցի փոխտնօրեն, սիրված մանկավարժ՝ ***Սասուն Հրաչյայի Ասլանյանի*** անժամանակ մահը եւ իրենց ցավակցությունն են բերում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Անգլիացի գրող ... Քիփլինգ: 9.Քաղաք Թուրքիայում: 10.Համեմ: 11.Ֆրանսիացի երգահան՝ Հեկտոր Լուի ...: 13.Ազդեցություն ունենալ: 16.Աշակերտ: 17.Վսեմ, բարձր: 19.Նստաշրջան: 22.Գալիք: 24.Գետ Հայաստանում: 25.Իտալացի մաթեմատիկոս ... Վոլտերա: 27.Երգիծաբանություն: 29.Բետոնից սարքած: 32.Երկայնավիզ թռչուն: 33.Հին Հռոմի բանակի հիմնական կազմակերպչական միավոր: 35.Գերմանացի թենիսիստուհի ... Հուբեր: 38.Ըստ հին հունական դիցաբանության՝ երկրի անձնավորումը: 40.Լարել, ձգել: 41.Չկամեցող: 44.Կիպ, մոտ: 47.Վրացական դիցաբանության չար ոգիները՝ մեկ բառով: 48.Մարդ ու ...: 50.Գունագեղ հեթանոսական փառատոն Ֆիլիպիններում «Աթի-...»: 51.Կախարդական աղոթքներով պատրաստած առարկա, որ կրողին իբր պաշտպանում է զանազան փորձանքներից: 52.Մեսրոպյան այբուբենի տառ: 53.Ռուսական բեռնատար մեքենա: 54.Ցամաք, անտամոլկ: 55.Բարակի հականիշը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Գինու տեսակ: 2.Քաղաք Գերմանիայում: 3.Համայնք Ֆրանսիայում: 4.Վրացիների հորեղբայրը: 5.Հույս (ժող.): 6.Կարեկցել, խղճալ: 8.Գերմանացի գյուտարար, դիզելային շարժիչի հայտնագործող Ռուդոլֆ ...: 12.Ազնվական իշխանների տիտղոս Հնդկաստանում: 14.Թորել, մաքրել: 15.Ես ի՞նչ իմանամ, չգիտեմ (ժող.): 18.Կոնգոն մինչեւ 1997թ. (Աֆրիկա): 19.Հայ հասարակական-քաղաքական գործիչ ... Սպանդարյան: 20.Հայ գրող ... Խանզադյան: 21.Գետ Շվեյցարիայում: 23.Երկիր Արեւմտյան Աֆրիկայում: 26.... ու վրա անել: 28.Հեթանոս հայերի արեւի պաշտամունքը մարմնավորող աստվածը: 29.Բարձրագույն ուսումնական հաստատություն: 30.Անզոր, թույլ: 31.Հաղթանակի դիցուհին հին հունական դիցաբանության մեջ: 34.Վրաց եկեղեցու խոշորագույն միջնադարյան վանքերից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտ: 36.Հացի տեսակ, բլիթ: 37.Սկզբնակետ: 39.Պայտ: 42.Եռօրյա թերթ նախկին Խորհրդային Հայաստանում: 43.Լույսի եւ մաքրության աստվածը Հայոց դիցարանում: 45.Պավլովոյում արտադրված ավտոբուս: 46.Բույսի մատղաշ ընձյուղ: 48.Շարժական գույք, կահկարասի: 49.Լատինական այբուբենի տառ:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Վիպակ: 4.Շամիրամ: 9.Սինուս: 11.Պապ: 12.Մրափ: 13.Ավո: 14.Եվրասիա: 16.Ատր: 17.Անա: 18.Այս: 20.Աճու: 22.Հրայր: 23.Եկա: 25.Չադ: 26.Ալանիա: 27.Երկ: 29.Եթե: 30.Լա: 31.Տարբեր: 33.Օմարի: 34.Նույն: 35.Շանթ: 37.Նու: 39.Ավետ: 41.Սոկրատես: 45.Կիվի: 46.Եսենին: 48.Քսակ: 49.Լաթ: 50.Ամրամ: 52.Կաղնի: 54.Նինո: 56.Լիմ: 58.Սանա: 59.Ավետիս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Վարագա: 2.Պեպո: 3.Կոպենհագեն: 4.Շինանյութ: 5.Ան: 6.Մումիա: 7.Իսրայել: 8.Արփա: 10.Աբրահամ: 15.Վարդ: 19.Սկալա: 21.Ծիրան: 24.Անդրանիկ: 27.Ետ: 28.Կրունկ: 32.Բյուրական: 33.Օթարի: 36.Օշինդր: 38.Մտել: 40.Եկ: 42.Որսկան: 44.Եսայան: 43.Սեթ: 47.Նարե: 50.Աննա: 51.Մոլի: 53.Ինն: 55.Ով: 57.Իս:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН” Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445